ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Ա. Գ. ԷԼԲԱԿՅԱՆ

Ոչ արտադրական ոլորտի աշխատանքի գլխավոր բովանդակությունը մարդկանց սոցիալ-կուլտուրական բազմապիսի կարիքների բավարարումն է։ Այդ ոլորտի աշխատողներն օգտագործում են նյութական արտադրության արդյունքները, անմիջապես չմասնակցելով ազգային եկամտի ստեղծմանը։ Նրանց աշխատանքը հանրօրեն անհրաժեշտ և օգտակար է հասարակության առաջընթացի համար։

Դա պայմանավորված է նրանով, որ ոչ արտադրական ոլորտի զարգացումը կախված լինելով նյութական արտադրության մեջ հասարակական աշխատանքի արտադրողականության աճից, իր հերթին հակադարձ ազդեցություն է գործում նյութական արտադրության և աշխատանքի արտադրողականության աճի վրա, քանի որ ոչ արտադրական ոլորտի ֆունկցիաների բուն մասնագիտացման մեջ կան հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման էական հնարավորություններ։

Կ. Մարքսը նշում է, որ արտադրողական և անարտադրողական աշխատանքի տարբերությունը հանդես է գալիս որպես աշխատանքի բաժանման հետևանք և այդ իմաստով նպաստում է աշխատանքի ընդհանուր արտադրողականության բարձրացմանը՝ շնորհիվ այն բանի, որ աշխատանքի բաժանումն անարտադրողական աշխատանքը փոխարկում է աշխատողների մի մասի բացառիկ ֆունկցիայի, իսկ արտադրողական աշխատանքը՝ բացառապես մյուս մասի ֆունկցիայի[1]։

Աշխատանքի հասարակական բաժանման խորացումը նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտների զարգացման բնորոշ կողմն է։

Ոչ արտադրական ոլորտի աշխատողների համար բնորոշ է նրանց անուղղակի մասնակցությունը նյութական արտադրությանը, որը դրսևորվում է մարդկանց վրա ունեցած ներգործությամբ, նյութական արտադրության զարգացման համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ։

Բոլոր այն աշխատանքները, որոնք կատարվում են ոչ արտադրական ոլորտում՝ բնակարանային-կոմունալ տնտեսության և բնակչության կենցաղսպասարկման, մարդատար տրանսպորտի և մարդկանց ու ոչ արտադրական ոլորտը սպասարկող կապի, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սոցիալական ապահովության, լուսավորության և կուլտուրայի, արվեստի, արտադրության հետ անմիջապես չկապված գիտության ու գիտական սպասարկման, վարկավորման և պետական ապահովագրության բնագավառներում, պետական ոչ արտադրական վարչական օրգաններում, հասարակական կազմակերպությունների ղեկավար մարմիններում և այլն, հանրօգուտ են և անհրաժեշտ հասարակության գործունեության ու զարգացման համար։ Նշված բնագավառների աշխատանքները անուղղակի մասնակցում են նյութական արտադրությանը, որով և հանրօգուտ են, բայց ոչ արտադրողական։

---

[1] *Տե՛ս* К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, М., 1962, стр. 167.

Ոչ արտադրողական աշխատանք են նաև նյութական արտադրության մեջ կատարվող հաշվառումն ու վարչա-տնտեսական ապարատի սպասարկումը։

Ոչ արտադրական ոլորտը արտադրության պրոցեսի վրա ազդում է նաև նրանով, որ նրա գլխավոր ճյուղերում կան արտադրողական աշխատանքի տարրեր։ Հայտնի է, որ աշխատանքի բաժանումը արտադրողականի և ոչ արտադրողականի իր ծավալով չի համընկնում հասարակական արտադրության գործունեության այդ բնագավառներում օգտագործվող աշխատանքին։

Ինչպես նյութական արտադրության մեջ կան ոչ արտադրական ֆունկցիաներ, այնպես էլ ոչ արտադրական ոլորտում հաճախ լինում է արտադրական գործունեություն։ Լուսավորության և առողջապահության բնագավառներում կարող են զուգորդվել ինչպես արտադրողական, այնպես էլ ոչ արտադրողական ֆունկցիաները։ Դա կախված է նրանից, թե որքանով է նրանց գործունեությունը կապված հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ աշխատուժի որակավորման և կատարելագործման հետ։

Առողջապահական, կրթական ու կուլտուրական ծառայությունները որքան արդյունավետ են անդրադառնում արտադրողական աշխատանքի վրա, այնքան աճում է ոչ արտադրական ոլորտի դերը նյութական արտադրության ճյուղերի զարգացման գործում։ Դա միանգամայն օրինաչափ է, քանի որ արտադրողական աշխատանքի գլխավոր հատկանիշը ոչ միայն նյութական բարիքների ստեղծումն է, այլ նաև արդյունավետության բարձրացումը, որը պայմանավորված է արտադրողական ուժերի զարգացմամբ և արտադրահարաբերությունների բնույթով։ Արտադրահարաբերություններն են, որ աշխատանքին առանձնահատուկ բովանդակություն են տալիս։ Դրանց փոփոխմամբ փոխվում է նաև արտադրողական աշխատանքի կատեգորիայի հասարակական-տնտեսական բովանդակությունը և արտահայտման ձևը։

Ինչպես նշում է Կ. Մարքսը, «արտադրողական բանվոր» հասկացողությունը պարունակում է նաև առանձնահատուկ հասարակական, պատմականորեն առաջացած արտադրական հարաբերություն»[2]։

Արտադրողական աշխատանքը բնութագրելիս աշխատանքի նյութականացումը չի կարելի հասկանալ բառացի՝ այն նույնացնելով շոշափելի նյութականի հետ։ Այսպես, օրինակ, էլեկտրաէներգիայի, գազի և տրանսպորտային արդյունաբերության մեջ կատարվող աշխատանքը չի նյութականանում արդյունքի մեջ։ Կ. Մարքսը գրում է. «Սակայն գոյություն ունեն արդյունաբերության այնպիսի ինքնուրույն ճյուղեր, որտեղ արտադրության պրոցեսի արդյունքը չի հանդիսանում նոր առարկայական արդյունք, ապրանք։ Տնտեսական տեսակետից այդ ճյուղերից կարևոր է միայն հաղորդակցությունների արդյունաբերությունը, լինի դա ապրանքների ու մարդկանց տեղափոխման բուն տրանսպորտային արդյունաբերություն կամ սոսկ լուրերի, նամակների, հեռագրերի և այլ հաղորդումների արդյունաբերություն, միևնույն է»[3]։

Ոչ արտադրական ոլորտի առաջատար ճյուղերի՝ լուսավորության և առողջապահության աշխատանքային գործունեությունը նպաստում է արտա-

2 Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 532։
3 Կ. Մարքս, Կապիտալ, հ. II, Երևան, 1936, էջ 28։

գրողական աշխատանքի առարկայացմանը հասարակական ամբողջական արդյունքի մեջ՝ աշխատուժի վերարտադրության միջոցով։ Դա ձեռք է բերվում շնորհիվ այն բանի, որ ոչ արտադրական ոլորտի նշված ճյուղերի աշխատողների գործունեությունն ներառում է արտադրողական աշխատանքի ֆունկցիաներ, որոնց միջոցով իրացվում է աշխատուժի մասնակցությունը արտադրությանը, նրա ձևավորումը, զարգացումը և պահպանումը, որով ոչ արտադրական ոլորտի ծառայությունները կարծես թե սինթեզվում են աշխատուժի վերարտադրության մեջ։

Աշխատուժի վերարտադրությունը և որակավորման բարձրացումը սերտորեն կապված են ոչ արտադրական ոլորտի կարևոր ճյուղերի՝ լուսավորության և առողջապահության գործունեության հետ։

Քանի որ աշխատուժի վերարտադրությունը սոցիալիզմի օրոք ենթադրում է ոչ միայն նյութական բարիքների որոշակի քանակի արտադրություն և սպառում, այլև հոգևոր ու սոցիալական կարիքների բավարարում, ուստի աշխատուժի վերարտադրության ծախքերի մեջ պետք է մտնի ինչպես անհրաժեշտ նյութական բարիքների, այնպես էլ օգտակար ծառայությունների արժեքը, որոնց մեծ մասը հանդես է գալիս մարդկանց անմիջական գործունեության ձևով[4]։

Ծառայությունները լինում են՝ նյութական և ոչ նյութական։ Ոչ նյութական ծառայությունները մեծ մասամբ սպառվում են իրենց կատարման պահին։ Տնտեսական հարաբերությունների մեջ հանդես գալով ապրանքների հետ հավասար իրավունքով, ծառայությունները, որպես հատուկ տեսակի ապրանքներ, ունեն սպառողական արժեք, բայց չունեն արժեք և ընդունում են ապրանքային ձև շնորհիվ այն աշխատանքի օգտակար հատկության, որը ծախսվում է որպես այդպիսին։

Այդ կապակցությամբ Կ. Մարքսը գրել է, որ փողը անմիջապես փոխանակվում է այնպիսի աշխատանքի հետ, որը կապիտալ չի արտադրում, այդ աշխատանքը գնվում է որպես ծառայություն։ Բայց այդ աշխատանքի առանձնահատուկ սպառողական արժեքն այստեղ ստացել է «ծառայություն» անունն այն պատճառով, որ աշխատանքը ծառայություններ է կատարում ոչ թե սրպես իր, այլ որպես գործունեություն, որը, սակայն, բնավ նրան չի տարբերում, ասենք, ինչ որ մեքենայից, օրինակ ժամացույցից[5]։

Ոչ նյութական ծառայությունները կատարվում են արտադրությունից դուրս, իսկ նյութական ծառայություններն ուղեկցվում են նյութական արտադրության պրոցեսով (օրինակ՝ կոշիկի և հագուստի վերանորոգումը, սննդի պատրաստումը ճաշարանում և այլն)[6]։

Ոչ արտադրական ոլորտի ճյուղերի զարգացման մակարդակը, նրանցում զբաղված աշխատանքի արդյունավետությունը, բնակչության ապահովվածությունը ծառայության հիմնական տեսակներով որոշելու համար անհրաժեշտ է ելնել Մարքսի այն ցուցումից, որ ոչ արտադրական ոլորտի աշխատողները պետք է «ծախսեն միայն անհրաժեշտ աշխատանք իրենց ոչ նյութական արդյունքների ստեղծման համար, այսինքն՝ ծառայությունների համար»[7]։

---

4 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. I, М., 1962, стр. 413—414.

5 Նույն տեղում, էջ 413։

6 Նույն տեղում, էջ 414։

7 Նույն տեղում, էջ 260։

Այս դեպքում սպառողական ծառայությունները կհամապատասխանեն նրանց արտադրության վրա կատարված նյութական և աշխատանքային ռեսուրսների այն ծախքերին, որ կատարվում է բժշկական, սոցիալական, կուլտուր-կենցաղային ծառայությունների համար[8]։

Սոցիալիզմի օրոք ոչ արտադրական ոլորտի այս կամ այն ճյուղի սոցիալ-տնտեսական նշանակությունը միշտ չէ, որ համապատասխանում է այդ պահանջներին։ Ընդ որում, ոչ արտադրական ոլորտի տնտեսական շահութավետությունը երբեք չի կարելի հակադրել այդ ծառայությունները սպառողների շահերին։

Սպառողական ծառայությունների համապատասխանությունը իրենց արտադրության «ծախքերին» չի կարելի պատկերացնել արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և արտադրական հարաբերությունների բնույթից անկախ։

Բնակչության սպասարկման նշված ծախքերը ենթադրում են բնակչության նյութական և ոչ նյութական բնույթի պահանջմունքների օբյեկտիվորեն անհրաժեշտ մակարդակի ապահովում։ Ոչ արտադրական ոլորտի ճյուղերի զարգացման մակարդակի սահմանափակումը կայուն նվազագույն չափով գործնականում վնասակար կլիներ։

Ոչ արտադրական ոլորտի ծառայությունների բավարարման բնույթը, աստիճանը և ձևերը սոցիալիզմի և կապիտալիզմի պայմաններում սկզբունքորեն տարբեր են։

Կապիտալիստական երկրներում ոչ արտադրական ոլորտի ծառայությունների արժեքը աչքի է ընկնում թանկությամբ։ ԱՄՆ-ի առևտրի մինիստրության 1967 թ. տվյալներով բոլոր սպառողական ծախքերի 41,1%-ը բաժին է ընկել ծառայությունների ոլորտին, բոլոր ապրանքների մեծածախ գները բարձրացել են 6,8, մանրածախ գները՝ 12,9, իսկ սպառողական ծառայությունների արժեքը՝ 30,1%-ով։ Բուժսպասարկման արժեքը բարձրացել է 50,4, տրանսպորտային ծախքերը՝ 19,9%-ով։ Այլ ծառայությունների արժեքը աճել է 34,3%-ով։ Սակայն գների վերոհիշյալ աճը «Նյու-Յորք պոստ» թերթի պնդմամբ չի արտահայտում թանկության և ամերիկացիների կենսամակարդակի ամբողջ պատկերը, քանի որ այն ընդգրկում է շուրջ 400 տեսակի ապրանքներ և ծառայություններ ու տարածվում է բնակչության 40 տոկոսի վրա[9]։

Սոցիալիզմի պայմաններում ոչ արտադրական ոլորտը «լիարժեք ծառայում է մարդու աշխատանքի նկատմամբ ունեցած անհատական ընդունակությունների վերականգնմանը և համակողմանի զարգացմանը»[10]։

Ծառայությունների որոշ մասը՝ գլխավորապես նյութական ծառայությունները, վճարովի են և փոխանակվում են բնակչության եկամուտներով։

---

8 Դրանց մեջ պետք է մտցնել ոչ արտադրական հիմնական ֆոնդերի մաշվածքի արժեքը, նյութական և դրամական ընթացիկ ծախքերը, բնակչության ոչ արտադրական սպասարկման վարձատրության ծախքերը։

9 Мировая экономика и международные отношения, Приложения: Экономическое положение капиталистических и развивающихся стран, обзор за 1967 г. и начало 1968 г., М., 1968, № 9, стр. 61.

10 М. Я. Сонин, Воспроизводство рабочей силы в СССР и баланс труда, М., 1959, стр. 13.

Ոչ նյութական ծառայությունները կատարվում են սպառման հասարակական ֆոնդերի հաշվին։ Կոմունիստական շինարարության ընթացքում հասարակական սպառման ֆոնդերը անընդհատ աճում են։

Կապիտալիզմի պայմաններում աշխատավորների նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանը որոշվում է ոչ միայն տվյալ երկրի արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, այլև լրիվ և մասնակի գործազրկության սահմաններով, ծառայությունների գների և արժեցուցակների մեծությամբ։

Սոցիալիզմի օրոք այդ պահանջմունքների բավարարման աստիճանը կախված է երկրի արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և ոչ արտադրական ոլորտի տեխնիկա-տնտեսական հնարավորությունից։

Կոմունիզմի առաջին փուլում ծառայությունները կրում են ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ բնույթ (օրինակ, նախադպրոցական հիմնարկները, բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունները, գիշերօթիկ և երկարօրյա դպրոցները, հանգստյան տները, առողջարանները, տուրիստական բաղաները, որոնք միաժամանակ պատկանում են կոոպերատիվ-կոլտնտեսային ձեռնարկություններին)։

Չնայած ոչ արտադրական ոլորտի որոշ ճյուղերի ծառայությունները վճարովի են, այդուամենայնիվ, դրանք ծառայում են բնակչության կոլեկտիվ պահանջմունքների բավարարմանը, ուստի և ունեն սպառման կոմունիստական սկզբունք։

Մանկական-նախադպրոցական, կոմունալ-կենցաղային ձեռնարկությունների և հիմնարկների լայն ցանցի ընդարձակումը նպաստում է կոմունիստական համակեցությանը աշխատավորներին մասնակից դարձնելուն, զարգացնում կոլեկտիվիզմը կյանքում ու աշխատանքում։ Այդ կապակցությամբ Լենինը գրում էր. «Բավականաչափ հոգատար վերաբերմունք ցույց տալի՞ս ենք մենք արդյոք կոմունիզմի ծիլերին, որոնք արդեն այժմ կան այդ բնագավառում։ Հասարակական ճաշարաններ, մսուրներ, մանկապարտեզներ—ահա այդ ծիլերի նմուշները»[11]։

Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս վճարովի ծառայությունների զգալի մասը իր վրա է վերցնում պետությունը։ Մեր երկրում, օրինակ, մեկ երեխայի խնամքի համար մանկամսուրներում և մանկապարտեզներում պահանջվում է միջին հաշվով տարեկան 300—400 ռ., մինչդեռ ծնողները իրենց աշխատավարձին համապատասխան վճարում են այդ ծախսերի 10-30%-ը[12]։

Արտադրության պահանջների և բնակչության պահանջմունքների բավարարման տեսակետից հատկապես մեծ նշանակություն ունի ոչ արտադրական ոլորտի այնպիսի բնագավառների արագ զարգացումը, ինչպիսիք են գիտությունը, ժողովրդական կրթությունը, առողջապահությունը և այլն։

---

11 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 29, էջ 527։

12 Пропагандисту политэкономии, М., 1967, стр. 242—243.

ЭКОНОМИЧЕСКАЯ ПРИРОДА НЕПРОИЗВОДСТВЕННОЙ СФЕРЫ

А. Г. ЭЛБАКЯН

Резюме

Непроизводственная сфера функционирования специализированного непроизводительного труда, наряду со сферой материального производства, является важной составной частью единого народнохозяйственного организма. Деятельность занятых в ней работников является общественно необходимой, направленной на прогрессивное развитие общества.

Непроизводственная сфера, будучи зависимой от роста производительности общественного труда, в свою очередь, оказывает все возрастающее воздействие на материальное производство и рост производительности общественного труда. Это выражается в том, что, благодаря воздействию непроизводственной сферы, при социализме непрерывно совершенствуются условия воспроизводства рабочей силы, что способствует дальнейшему росту эффективности общественного труда.